



ՕՐԱԳԻՐ ԶՄԻՌՆԻՈՅ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ

ԵՐԵՎԱՆԻ ՌԵԴԱԿՏՈՐԻ ՏԱՐԻ ԶՄԻՌՆԻՈՅ ԵՄԲԱԹ 1 ԱՊՐԻԼ 1878

ԹԻԻ 1089

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Բանակցութիւնքն կը շարունակեն 'ի մէջ Ռուսիոյ և Անգղիոյ, ինչպէս նաեւ 'ի մէջ Եւրոպական մեծ տէրութեանց և յիշեալ երկու նախանձորդ (rival) մեծազօր տէրութեանց՝ որպէսզի համաձայնութիւն մի յառաջ բերուի 'ի կարգադրութեան ներկայ քաղաքական դժուարութեանց և որովհետեւ թէ՛ Ռուսիան և թէ՛ Անգղիան յոժարամիտ են՝ կարելի եղածին չափ փոխադարձ զիջումներ ընել առ 'ի հաստատուն պահել զխաղաղութիւն աշխարհի, ուստի ընդհանրապէս կը յուսացուի թէ վերջապէս կարելի պիտի լինի իրաւախօսութիւն մի գոյացնել 'ի մէջ Մեծին—Բրիտանիոյ և Ռուսիոյ . իրաւախօսութիւն, որ միայն Եւրոպական դեպքանաժողովոյ մի միջոցաւ կրնայ 'ի գործ դրուիլ, եւ թէպէտ առայժմ դեպքանաժողովոյն գումարման խօսքն չի լինիր, բայց պարտիւք յուսալ թէ ներկայ բանախօսութիւնքն պիտի յաջողին վերահաստատել զյիշեալ գումարումն Գուցէ տմանք՝ տեսնելով զշարունակութիւն զինուորական մեծամեծ պատրաստութեանց 'ի կողմանէ Անգղիոյ և Ռուսիոյ, խորհին թէ այսուհետեւ անկարելի է իրաւախօսութիւնն Բայց այդ մտածութիւնն զիջուի . քանզի ընդհակառակն՝ գուցէ երկուստեք եղեալ պատերազմական ահագին պատրաստութեանց չնորհապարտ պիտի լինիմք Եւրոպոյ խաղաղութեան հաստատուն մնալն :

Այսպէս ասելով չեմք ուզեր ամենեւին պնդել թէ քաղաքական կացութիւնն վտանգաւոր չէ . այլ ընդհակառակն զիւրաքորոք նիւթոց վերայ կը գտնուի այն, և անխնայեմութեան փոքրիկ կայծ մի կրնայ ահագին հրդեհ պատճառել և տակնուվրայ ընել զաշխարհ Բայց ոչ ոք կը տարակուսի Ռուսիոյ և Անգղիոյ պետական զբաղումը անձանց խոհական և իմաստուն աշխարհավարութեան վերայ, ինչպէս նաեւ միւս մեծ տէրութեանց հանճարեղ և ազդու միջնորդութեանը վերայ . հետեւաբար իրաւունք ունիմք յուսալու թէ Աստուծով անմիաս պիտի մնայ ընդհանուր խաղաղութիւնն :

Լոնտոնի «Մորնինկ—Բոսթ» օրագրոյն կէս—պաշտօնական մի յօդուածն կըսէ, թէ Անգղիոյ հաստատամիտ նոր ընթացքն՝ դեղեցիկ յոյս մի

կրմատուցանէ 'ի մասին խաղաղութեան հաստատուն մնալուն . քանզի յոյժ անհաւանական է որ Ռուսիան կամի ընդհանուր պատերազմի մը մէջ ձգել զինքն . Միեւնոյն օրագիրն կ'զուշակէ թէ Մեծին Բրիտանիոյ նոր քաղաքական նոթեան ուղղակի վախճանն պիտի լինի հարթել զբոլոր դժուարութիւնս և ապահովել ըզխաղաղութիւնն :

Ըստ հեռագրական լրոց, կըսուի թէ Գերմանիան կաշխատի համաձայնեցողութեան Ռուսիոյ ընդ աւսարիական օգտից, և թէ խաղաղասիրական կուսակցութիւնն երթալով կը զօրանայ 'ի Բէդէրսպուրկ և առաւելագոյն աղգեցութիւն ունի այժմ Զարին առջև քան երբէք :

Գարձեալ կը հաւաստեն թէ Գերմանիան պիտի համաձայնի Աւստրիոյ և Անգղիոյ հետ 'ի մասին հարկաւորութեան չափաւորելոյ զբոլորեալ դաշնագիրն Այս—Սաեֆանոյի :

Վերջապէս յորմէ հետէ Սօլալիւրի մարքիշն Անգղիոյ արտաքին գործոց պաշտօնեայ անուացաւ, քաղաքական իրաց վիճակն աւելի խաղաղասիրական կերեւին, և կըսուի թէ Գորդչաքֆ իշխանն 'ի պատասխանի չըջաբերական նամակին յիշեալ Մարքիշին, խնդրած է որ Անգղիան աւելի ճշդիւ յայտնէ զպահանջմունս իւր 'ի բարձումն վտանգաց, որք կըսպառնան, կըսէ յիշեալ չըջաբերական, Անգղիոյ օգտիցն ու եւրոպոյ խաղաղութեան :

Կայսերական հրովարտուալ, ի Կ. Պօլսի և 'ի չըջակայս նորին գտնուող օմանեան զօրաց ընդհանուր հրամանատարութիւնն Ղազի Օման վաչային յանձնեցաւ, և սպայակուտի ժողովոյն նախագահութեան պաշտօնն Ղազի Մուսթաֆա փաշան՝ որ աղղ պիտի պահապան զօրաց հրամանատար է, միանգամայն առաջին նախագահ անուանեցաւ զինուորական խորհրդոյն (Տարի Եւրոպ) :

Հասարակաց կրթութեան պաշտօնատան խորհրդական Սադըղ Յօհաննէս էֆէնտին Գեաթիպ էֆէնտի կարգեցաւ 'ի պաշտօնատան արտաքին գործոց :

Պալեան Սարգիս—Պէյն, որ յամաց հետէ մեծ յաջողութեամբ կը վարէ զպաշտօն արքունի ճարտարագետի, կայսերական որոշմամբ՝ Սէր—

Մէրմարը Տէվլէթ այսինքն տէրութեան առաջին ճարտարագետի տիտղոսաւ պատուեցաւ :

«Մասիս» լրագրոյն Մարտի 21 թուոյն մէջ ընթերցեալք .

«Նիքոլաս Մեծ—Գուքն չարաթ օրէն 'ի վեր Կ. Պօլսի կը գտնուի : Նորին Բարձրութիւնն չարաթ օրէն Այս—Սաեֆանոյն Կ. Պօլսի եկաւ Լիւլատիա շողենաւով և առաջին նախարարին և պատերազմական գործոց նախարարին հետ տեսակցելէ ետեւ, երեքօրեկ կայսերական պալատը գնաց և երկու ժամու չափ տեսակցեցաւ վեհա Սուլթանին հետ . յետոյ Ռուսիոյ դեսպանատունը գնաց և զիշերն հոն անցուց :

«Կիրակի օրն դեսպանատան մատուին մէջ պատարագային արարողութեան ներկայ գտնուեցաւ : Յետոյ Գերմանիոյ դեսպան տը Ռայս իշխանին նորածին որդւոյն մկրտութեան ներկայ գտնուեցաւ՝ կնքահայրն ինք՝ ըլլալով, իրիկուան դէմքէ հատկանշի կողմերը պտըտեցաւ և իրիկունը նորէն Ռուսիոյ դեսպանատունը դարձաւ :

Վեհափառ Սուլթանն իւր անձնապահագետներէն մին Մեծ Գուքն տրամադրութեան ներքեւ դրաւ :

—Ի Կ. Պօլսոյ զհետեւեալն կը ծանուցանեն Լոնտոնի «Սթէնտերտ» օրագրոյն :

«Ռուսիոյ դեսպանական գործակատար մօսկա տը Նէխոսֆ ծանուցագիր մը՝ յուղարկեց Բարձրագոյն Դրան, խնդրելով որ անգղիական նաւատորմին հեռանայ 'ի մօտակայից Կ. Պօլսոյ : Սալֆէթ փաշան հաղորդեաց զայս ծանուցագիր Անգղիոյ դեսպան միտոր Լէյէրտին . որ ըստ հրահանգաց զօրս ընկալաւ 'ի Լոնտոնէ, պատասխան տուաւ թէ անգղիական նաւատորմին պիտի մնայ անդ՝ ուր կը գտնուի, մինչև որ Ռուսք մեկնին 'ի չըջակայից Կ. Պօլսոյ» :

—Լորիս Մէլիքօֆի եղբորդին Վահան Մէլիքօֆ, որ հեծեալզօրաց հրամանատար էր, ըստ Լէյէնթ Հիւրէլտ օրագրոյն՝ մեռեր է Կարնոյ մէջ, Թիֆլիսի հիւանդութեամբ :

Իսկ Լորիս Մելիքօֆ զօրապետն՝ որ նոյնպէս թիֆլիսէն պառկած էր, գոհութիւն Աստուծոյ, կատարելապէս առողջացեալ է, և այս բարեբաղդ առթիւ, կըսէ Կ. Պօլսոյ Լա թիւրքի օրագիրն, օգոստափառ Զարն բարեհաճեր է կոմի տիտղոսաւ պատուել զնա :

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԱՅՏԵԼՈՒԹԻՒՆ ՀԱՅԿԱԶԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ ՈՐ Ի ԹԷՂՐԱՆ

Դու լուսատու Հայ ազգի, ճրագ պայծառ վարժարան, Դու լուսոգին Հայն Թէհրանու բարեգէ զիւր ապագայն : Պաշտպանում ես մեր մանկունքն քո խնամող յարկին տակ, Այսուհետ պէտք է նորանք քեզմով գտնեն պատիւ յարգ : Երբ եօթանասուն թուի առաջի օրն կաղանդ, Նոր օր, նոր կեանք նոր տարի թողիր մեզ համար աւանդ : Յանկարծ երեսն ելար իբրեւ նոր հարս զարդարուած, Տեսակ, տեսակ գոյներով փայլ ցոյց տուիր մեր մարդկանց : Հաղար տեսակ հրապուրով և սիւղածեմ քայլերով, Ճանապարհը ուղղեցիր կանոնաւոր ընթացքով : Զմայլեցան քո տեսուն ուսումնասէր ընկերներ, Անխայ հետեւելով արին քո ամեն ծախքեր : Ետևով ուսման մէջ ծնար առոյգ մանուկներ շատ դու, Քեզ խնամող Տնօրէնն կարգեց դայեակ կախնատու : Երբ լրացաւ քո շրջան բացուեց նորանց լեզուներ, Երբ լեզուաւ խօսէին, որ մեզ համար քաղցր էր : Հանգիստաւոր տարեդարձ ուրախութեամբ կատարուեց, Աղբային քաղցր երգեր նորանց բերնիցն հնչուեց :

Ներդաշնակեր նորանց հետ զօրականաց նուագարանք, Խառնուէին միմեանց հետ լինէր ախորժեկի ձայնք : Եարունակեց այնուհետ ամէն տարի տարեդարձ, Մեծամեծ պաշտօնակալք ներկայ էին հաւաքուած : Եւրոպացի մեր եղբարք կ'դիտէին զմայլած, Ապուշ աչօք նայէին Պարսիկներն զարմացած : Քո սրամիտ որդիքն քաջ պատասխաններ տային, Ծափահար կեցցէներով քնութիւնք վերջանային : Քո հեռատես Տնօրէն յառաջուց լաւ գուշակեց, Արագաշան հետեւեց ուսեալ անձինք դուրս բերեց : Ինչի՞ հիմայ մերկացար քո գեղեցիկ զարդերից, Ինչի՞ շուտով հեռացան սիրահարներ քո մօտից : Անշուղդ տարւոյ բերմունք քաղաքիս վատ դրութիւն, Նուազեցոյց խանդարեց բարձաւ քո շքեղութիւն : Քո Դայեակէ էլ յուսահատ քո ապագայ ընթացքէդ, Դարցոյց իւր դէմքն յայլ կողմ, այլ շահերի ակընդէս : Այսքանով դու գոհ եղիր, որ դեռահաս դուակըդ, Կառավարէ արդ որբեր, անշուք մնացած քո տունըդ : Մինչ երբ պառկիս, Հայու Բաղդ, մեղի չընայիս ընդէր, Այսպէս չընալ մի հարսի արեցիր դու որբատէր : Դառն է ինձ զբեղտեանեւ այսպէս անշուք մերկացած, Ցաւօք սրտի կրկնութայ քեզ այցելել Բժշկեանց :

Ի Թէհրան, 5 Յունիս 1877

—Կ. Պօլսոյ «Լէվէնթ Զիրէլ» օրագրոյն Ապրիլի 3 (ն. 8) թուոյն մէջ ընթերցումը .

«Վսե. Համամեան Սարգիս Էֆէնտիի տիկնոջ առաջնորդութեամբ կայսերական պալատը 'ի նպատակ վերջին պատերազմէն փրկուած վերադարձող և գաղթականաց՝ տրուելիք նուագահանգէսը (concert) ասկէ առաջ ծանուցեր էինք : Այժմ կը բերք թէ՛ ամեն հարկաւոր եղած պատրաստութիւնները ձեռք առնուած են , և յուսարի է որ վեհա. Սուլթանն ևս իր բարձրաշուք ներկայութեամբը պատուէ սոյն նուագահանգէսը :

«Մասնաւորապէս կը բերք թէ՛ ծովային դործոց պաշտօնեայ Սայիտ փաշան նամակ մը գրած է Համամեան Էֆէնտիի տիկնոջ որ սոյն մարդասիրական գործը յղացած է , յայտնելով նմա թէ վեհա. Սուլթանը զխառնութիւնն ունի ներկայ գտնուիլ սոյն հանգիսին . իսկ եթէ անակնկալ պարագաներ իր ներկայութիւնը չթոյլատրեն , Նորին Վեհափառութիւնը պիտի հաճի իր կողմանէ ներկայացուցիչ մը գրկել սոյն նուագահանգէսին» : (Թարգմանութիւն Յ. Բ.)

—Էրեսմը թէ Ռուսիոյ օգոս. կայսրն՝ Ալի— Ստեֆանովի հաշտութեան դաշնագրոյն ոտորագրութեան բարեպատեհ առթիւ , Սպիտակ Արծուոյ կարգին առաջին աստիճանի շքանշանն շնորհեալ է արտաքին գործոց նախարար Սաֆէթ փաշային : Այլև Ս. Անայի կարգին մեծ ժապաւէնն Սատուլլահ—Պէյին և Համամեան Սարգիս Էֆէնտիին , նմանապէս նոյն կարգին երկրորդ աստիճանի շքանշանն Թարէն Էֆէնտիին շնորհած է :

—Բարձրա. Նիքոլաս Մեծ—Դուքսն 'ի նպատակ պատերազմի գաղթականաց առհասարակ՝ 2000 Բոլ իմբէրիալոսի շնորհեր է ձեռամբ Կ. Պօլսոյ Գերմանիոյ դեսպանին :

—Մօնսէյնէօր կրասէլի , որ Հռոմի Աթոռոյն քահանայապետական նուիրակ է 'ի Կ. Պօլսոյ , յանցելուն պատիւ ունեցաւ օգոս. Սուլթանին ներկայանալոյ , որում յանձնեաց Լէոն ԺԳ. Պապին ինքնագիր նամակն , որով Նորին սրբազնութիւնն իւր գահակալութիւնը կը ծանուցանէ Նորին կայսերական Վեհափառութեան :

ԱԶԳԱՅԻՆ

Ամիս մի չկայ , որ երեք եպիսկոպոսունք , այսինքն գերա. տեարք Մ. Խրիմեան՝ նախորդ Պատրիարքն Կ. Պօլսոյ , Խորէն Նարայէյ և Մատթէոս Իզմիրեան սրբազանքն մեկնեցան 'ի Կոստանդնուպօլիս :

ԱՒԵՐԱԿ ԶԱՅԱՍՏԱՆԻ

Ոգին եւ որդին Հայաստանի :

ԱՌԵՐԱՅԻՆ ԴԵՏ

Անանային մի գիշեր էր ,
Մեղմիկ մի հով կը փռէր ,
Եւ լուսինը , աստղեղդ դշտոյն
Իւր ճաճանքը արձակէր :
Այո՛ , փրէն , հարս նազելի
Սիգայր յ'Ովկեան այն վերին ,
Բայց տխուր և դունատ դիմօք
Չունէր ժպիտ յ'երեսին :
Մերթ փայլում էր , շողողում էր
Արծաթափայլ մի լուսով ,
Մերթ խոյս կը տար , կը ծածկուէր
Ընդ թխածոյր մի ամպով :
Մերթ ջրերում կը տեսնուէր
Նորա չքնաղ երեսը ,
Մերթ ամպահիւս մութ քողի տակ
Կը ծածկէր նա իւր դէմքը :
Արաքսն յայնժամ ոլոր մուրը
Սլանում էր լայն դաշտում
Եւ իւր ալիքը մեղմ ձայնով
Գլորում էր , սահեցնում :
Հին եռանդ ուն իւր միանունը
Փրփրադէղ անդ չքուտեք :
Եւ կը քայլէ , կատաղաբար
Չ'որոտար նա , չ'մռնէր :
Նորա խաղաղ ալիքն վերայ

տանդնուպօլսոյ : Ըստ տեղեկութեանց մերոյ՝ 'ի յիշեալ Մ. Հարց առաջինն ուղեորեցաւ 'ի Մանչէսթըր՝ ըստ խնդրոյ Հայոց բնակեցոյ 'ի նոյն Հաստատան քաղաքի , 'ի հոգեւոր այցելութիւնն նոցա : Երկրորդն՝ այսինքն Խորէն եպիսկոպոսն որ Հայկազեան նորահաստատ կաճառին նախագահն է , դնոց 'ի Բէգէրսպօլսի հայկական ձեռագիր հին և կարեւոր մատենաներ վնասելու , որք կը գտնուին եղեր նոյն մայրաքաղաքին կայսերական մատենադարանին մէջ : Իսկ իզմիրեան եպիսկոպոսն՝ ըստ հրաւիրանաց վեհա. կաթողիկոսին 'ի Ս. Էջմիածին գնաց :

Անգղիական օրագիրքն , որպիսի են Թայմը , Տէյլի Նիւս , Մանչէսթըր Կարտիքն և այլն , 'ի սուղ ժամանակէ հետէ Հայոց և Հայաստանի վրայօք զբաղեալ են և ոչ սակաւ խորհրդածութիւններ կընեն 'ի նպատակ բարեօրոյն այժմեան վիճակին Հայաստանի . որում ըստ օրինակի Պաշկարիոյ՝ ինքնօրինութիւնն շնորհուելու հարկ կը համարին և մեծ փափաք կը յայտնեն :

Այս փափաքն 'ի դործ գնելու համար ժողովներ (միթինկ) կը լինին 'ի Լոնտօն 'ի ներկայութեան գլխաւոր լորտերու և ազգային երեսփոխանաց և խնդիրն այն աստիճան կը պաշտպանուի նոյնիսկ բարձրագոյն մէջ , որ արտաքին գործոց նախորդ պաշտօնեայ լորտ Տէրպի խոստացեալ էր ուշադրութիւն մատուցանել այս խնդրոյն :

Տփլիսի «Մշակ» օրագիրն կըսէ թէ այս խնդիրն նոյն իսկ Անգղիոյ կառավարութեան գլխամարմին կը յուզի և նպատակ միտուն , որ ոչ է յօդուտ Հայոց , այլ 'ի նպատակ նոյն ահաբեկութեան քաղաքականութեանն : Յիշեալ օրագիրն իւր 15 Երրորդ թուոյն մէջ յառաջ կը բերէ նաեւ զհետեւեալ հետաքրքրական հեռագրաւորն՝ որոյ ինչ արժէք ունենալն կը թողուիք որ մեր ընթերցողը գտնեն :

«Ինչպէս մեր ընթերցողին արդէն յայտնի է Վէնայից ստացված հեռագրէց , Անգլիան դուրս է Կ. Պօլսի Հայոց Պատրիարքին պահանջել Թուրքիայից Հայաստանի ինքնավարութիւնը , խոստանալով պաշտպանել Հայրիկ այդ պահանջողութիւնը՝ իրենցու Կօնֆէրանցիում . իսկ Հայոց ազգային ժողովը չէ ընդունում այդ առաջարկութիւնը» :

Ազգասիրական ուրախութեամբ ընկալաք 'ի Թէհրանէ գլխաւորայ նամակն՝ զոր գրեալ է մեզ մին յաշակերտաց Հայկազեան վարժարանի նոյն մայրաքաղաքին : Ի նոյն նամակի ծրարեալ

դատք մի քանի ոտանաւոր աշխատասիրութիւնս յիշեալ աշակերտաց , որոց խնդրոյն համեմատ զմի մասն նոյն աշխատասիրութեանց հրատարակեմք 'ի Բանասիրականի ներկայ թուոյս և զնախաջարկն իւր ընծայեցողք յաջորդ թուով : Անշուշտ գովութեան և քաջալերութեան արժանի է ուսումնասիրական գեղեցիկ եռանդն աշակերտաց Հայկազեան վարժարանին Թէհրանի . որում յաջորդութիւն և յարատե յառաջագիմութիւն բարեմաղթեմք 'ի բոլոր սրտէ :

Թէհրան , 6 Փետրվար 1878

Մեծարդոյ և բարեշնան խմբագիր ,

Պիտի զարմանաք ընդունելով այս գրութիւնն այնպիսի մի անձնէ , որ երբէք ձեզ հետ մինչ ցարդ թղթակցութիւն անելոյ պապիւք չէ ունեցած , տեսնելով միանգամայն նամակ մի 'ի հեռաւոր սահմանէ առ ձեզ ուղղուած . որում գուցէ երբէք չէիք սպասեր :

Բայց ես մի համարձակութիւն կըստնամ այս մասին . քանզի եթէ առաջին անգամ ձեզ գրելոյ պատիւը կուենամ , ձեզանէ շնորհակալ լինելոյ համար է միայն , ձեզ արտայայտելոյ համար մեր երախտագիտական զգացմունքը՝ մեր նկատմամբ ձեր ունեցած ազգասիրական բարեսրտութեանը մասին : Թէ և չպիտի կարողանամ հաւատարմաբար յայտնել այն զգացման աստիճանը , զոր մեր սրտերն կը կրեն : Մինչ Պարսկահայի մատուցական ոգին կը միայր տգիտութեան ալեաց վերայ , և այն գիշերային խառնուրդ ոչինչ արշալոյս չէր խոտանայր մեղաւետել , մինչ Պարսկաստանում Հայոց երակներն մէջ պաղած էր Թորգոմեան ազգին սեպհական արիւնը . և նորա լեզւ , մատուղալ զաւակունք և երիտասարդք օրինակ առնելով իւրեանց հայրերէն՝ տգիտութեան մութեանդն ձեռադին կը զոհէին իւրեանց անգին վայրկեանները և ոչ ի մասնութեան աստուածուհոյ Ալեհասայ դուք ազգասիրական եռանդեամբ բարբառալի Հայկական ոգին շարժեալ , ձեր «Իրշալոյս» պատուական լրագիրը առանց ընդհատութեան մեզ յուզարկելոյ բարեսրտութիւնը ունեցել էք : Կարելի է ասել թէ Հայոց ազգը ձեզ պէս անձանց կ'ողարտի առաւելապէս իւր ներկայ յառաջագիմութեան այս կէտը . ձեզ որ 'ի բազում ամաց հետէ սրպէս անխնայ մշակ կաշխատիք ազգային մատուցական շարժման նպաստամատոյց լինել , և հայրենիք , կրօնք բառերն յեղեղած էք միշտ մեր ականջներէն . և ինչ արդեօք աւելի քան զայս կարէիք գործել այս մասին : Ազգութեան վերայ մտածած ժամանակներդ 'ի մուսոցօնս չ'արկիք նաեւ զմեզ . և յիշե-

Եւ Պարսկական խուժաստանէս
Քեզ գամ երկիր դիւցազնաց» :
Մինչ բորբոքեալ խօսէր այսպէս
Երիտասարդն այն արի ,
Յանկարծ վերցուց նա իւր աչեր ,
Տեսաւ մի կոյս դեզանի :
Մի գիցուհի էր գեղեցիկ ,
Ուն աչերով , հերարձակ
Եւ ցայտում էր թարթափէն դուրս
Ողեւորեալ մի կրակ :
«Ո՛վ ես դու , վեհ յաւերժհարսդ ,
Հարցուց ապա զպատանին ,
Չ'իյէ՞ Նանէ կամ Աստղիկն ես
Գեղեցիկութեանց գիցուհին :
Կոմ՝ Թէ գաս աստ իմ հետ հեղու
Արաքսի մէջ արցունքներ ,
Միթէ և դու ունիս սրտումդ
Ծանրացած դառն վտեր :—
Բայց նա զնոց հանդարտ կերպով
Եւ պատանոյն դէմ կանգնեց
Եւ սրտի դուռն բանալով
Խոր թառաղներ արձակեց :
— «Հայաստանեայց եմ ես Ողին ,
Դարուց 'ի վեր հալածուած ,
Խաղեալի և անլուր վիշտք
Միշտ ինձ բաժին են եղած :
Չ'կան այլ ևս իմ քաջ որդիք
Արամ , Վահագն և Տիգրան ,
Ո՛վ Արաւելս և ոչ Տրդատ ,

Նստած կայր մի պատանի ,
Չեւքն գլխոյն նեցուկ տուած՝
Մտածում էր վշտալի :
— «Արամ» ասաց , և արտօններ
Աչքէն իջան երասխում .
Ինչո՞ւ արդեօք դու լուռ ու մունչ
Սահում ես այս ձորերում :
Ինչո՞ւ այդ դաշտք , քո գետախունք
Այդ պէս տխուր , տրտում են ,
Ինչո՞ւ այդ վայրք և այդ տեղիք
Այժմ ամառի , անբեր են :
Դու Հայկական սրբազան գէտ ,
Ինչո՞ւ Ստիգս ես դարձել ,
Եւ քո ընթացք չ'ունի ոչ ձայն
Եւ ոչ ազմուկ արձակել :
Հայրենական դու իմ սուրբ գետ ,
Ընդունի՛ր իմ արտասուք ,
Որ կը հեղում առատօրէն
Խոր համակեալ դառն 'ի սուղ :
Իմ աչքերէն կախուած կայլակք
Թո՛ղ քո ջուրըդ խառնուին ,
Եւ դժբաղդիս այս գոհարքը
Մրտիս թարգման համարուին :
Եղբրական այն անցեալը ,
Որ քո աչքք դու տեսեր ,
Յիշողութիւնըս պղտորէ
Եւ խռովէ զին կարելիք :
Աւքեղ դիմում՝ ո՛վ Հայաստան ,
Դու հայրենիք քաջարան ,

«Մեք մեր նուիրական կոյնամբն և պաշտամբն յարաժամ մեր ժողովուրդն ի հնազանդութիւն, ի հաւատարմութիւն կը յորդորենք . ընդ մեզ բոլոր Հայ եկեղեցականութիւնն ալ ամեն իշխանութեանց և կառավարութեանց ներքեւ և ամենայն ուրեք այս գովելի սկզբան հետեւած են, որոյ արգասիքն ակն յայտնի կերելի Հայոց վրայ :

«Մեր սիրտը բաց է բարձրաւ Աստուծոյ սրբաւայր խորանին ստորոտը, նոյնպէս բաց է մեր կառավարութեան առջեւ, մեր բոլոր իղձը և եռանդը մեր Հայրենեաց բարեկարգութիւնը՝ ընչից, կենաց և պատուոյ ապահովութիւնը տեսնալ է : Կ'իտաստովանինք թէ՛ Տէրութեան կամքն ու հրամանն արդար է և Օսմանեան կառավարութիւնը միշտ սիրած է մեր ազգը . բայց չենք կրնար ծածկել որ Ասիոյ մէջ Հայ ժողովուրդն կարգ մի վայրենի ցեղերու ամեն մասամբ ճարակ եղած է : Ուստի հարկ է արդար հատուցում . ալարձատրութիւն հաւատարմաբար և արդարապէս վարուող պաշտօնէից, և պատիժ կառավարութեան օրինաց հակառակ ընթացող ամեն կարգի պաշտօնէից :

Իսկ Գօնֆէրանսի մասին ալ ուրիշ նկատում մի ունեցած չենք, բայց Օսմանեան կայսրութեւ ծառայութիւն մի մատուցանել :

Զմիւռնիա, 29 Մարտ 1878

Յարգւոյ խմբագիր Տէր,

Ասկէ չորս օր առաջ երկու մուրացկաններ ուրիշ մէկու մը առաջնորդութեամբ կը ներկայանան բարեկամ Պ. Յովհաննէս Արիկեանի և ցուցնելով Մշոյ Ս. Կարապետու վանքին ու Պատրիարքարանի կնիք կրող կոնդակ մը, (որ այն աղքատներէն մէկուն խուրդուլ անունովին տրուած և նոյն կոնդակով մուրալու համար որոշեալ ժամանակն ալ սպառած է), կառավարիկն գաղտնի որ նոյն օրինակ երկու հատ գրէ, և զինքը լիովին վարձատրել կ'իտաստանան, կըսեն միանգամայն թէ արդէն հոգ տարած են կնիք չինել տալու : Պ. Արիկեանը թէ և իրենց կ'իմացնէ որ ըրածնին մեծ նենգութիւն մ'է, և մեծ պատժոյ արժանի պիտի ըլլան եթէ ազգային վարչութիւնը իմանայ, սակայն մուրացկանները անաստելով դժգոհ կ'մեկնին, և Պ. Արիկեանը մեզ պատմելով այս գործը, հետամուտ եղանք անոնց գործերը խուզարկելու և երեք օր ետքը կոնդակը տաճիկ փորագրելի մը քով տեսանք և անմիջապէս Առաջնորդ սրբադան հօրը դիմելով՝ գործը իմացուցինք որ զրկեց Քէհեան նոյն կոնդակը գրաւելու : Տեսնենք թէ ինչ վախճան պիտի ունենայ այս մուրացկանաց ընթացքը :

Երկու մուրացկանները կրկին հարաւ համար ազգին պատիւն առ ոչինչ գրելով՝ կնիքներ կրկեցնեն և ինչ վատութիւն . . . խիստ հաւանական է որ այսպիսի դէպքեր շատ ու շատ անգամ կրկնուած են անցեղոյն մէջ և դարձեալ մեր խղճաւոր վանահայրներ ու Պատրիարքներ առաւ կոնդակներ կը շնորհեն նոյն խակ առողջ անձներու, որոնք ամեն տեսակ ծառայութեանց կ'յարմարին և այս ընթացքով միթէ կատարեալ քաջատրուութեան չ'են առաջնորդեր զանոնք : Ըստ մեզ աւելի լաւ կ'ըլլար եթէ անոնց համար գործ մը գտնեն կամ թէ հանդանակութիւն մը ընելով հեռացնեն, որպէսզի այս տեսակ վատ միջոցներու չ'ընեն :

Մնամ բազում յարգանք
Մ. Տ. Յ. Քիչիքեանց :

ՄԱՀԱԳՈՅԺ

Ճաւախ սրտիւ կը ծանուցանեմք թէ մեր քաղաքակից Թումանյան Յակոբ աղան՝ կաթնուածոյ յանկարծահաս հարուածով մի հինդուսթի երեկոյն առ Աստուած փոխեցաւ զկնի մի քանի աւուրց հիւանդութեան, ի հասակի գրեթէ 20 ամաց : Հանգուցեալն պարզապէս, բարեբաւոյ և բարեխան մի անձն և պատուաւոր վաճառորդ իւր : որոյ անակնկալ մահն տխուր տալու տրութիւն ըրաւ ամեն ազգայնոց վերայ և անմիջեւ ցաւոց մէջ ձգեց զբոլոր ազգականս և զգործողք ընտանիս իւր : Վախճանելոյն յուզարկաւորութեան հանդէսն երէկ սովորական փառաւորութեամբ կատարեցաւ :

Կոնխասաս և ցաւախ մահ մի՛ յանցելում շարաթու ևս տեղի ունեցաւ :

Համեստափայլ այրի տիկին Մարթա Ա. Տէպէճեան, դուստր արժաւ տէր Գէորգ աւագ քահանայի քաղաքիս՝ զկնի երկար և անբուժելի հիւանդութեան միոյ՝ ի 24 Մարտի վերջացելոյ առ Աստուած փոխեցաւ ի ծաղիկ հասակի 24 ամաց : Հանգուցեալն երկու օրը ազլիկ զաւակ կը թողու ի միթարութիւն իւր ծերունազարդ տէր հօրն և իւր ազգականացը :

Արժանայարգ Հ. Իրէքճեան պատուելին, որ Կ. Պօլսոյ խառնակ Ս. Նուպարեան և Շահնազարեան ուսումնարանին նախկին տեսուչն էր, յանցելում շարաթու եհաս ի 24 մարտ, և ըստ ինքրոյ վիճակի ազգային վարչութեան ստանձնեաց ղեկըքին տեսչութիւն քաղաքիս երկուց սեւից ազգային վարժարանոց և արդէն սկսաւ վարել զփափուկ և զճանր պաշտօն իւր :

Քաջայոյս եմք թէ իւր փորձառու և բարեխան գործունէութեամբ պիտի յաջողի ըստ արժանւոյն զարդացնել զյիշեալ հաստատութիւնս ի միթարութիւն ճշմարիտ ազգասիրաց :

Հաճութեամբ սրտի կիմանամք թէ անգղիական նաւատորմին հրամանատար Հորնպի ծովապետն՝ ընկերութեամբ Էտմուրդի Դքսին, որ Անգղիոյ թագուհւոյն որդին և Ռուսիոյ կայսեր փեսան է, անցեալ ամսոյ 14ին բարեհաճեր է փոխադարձ այցելութեան երթալ Նիկոմիդիոյ Հայոց փոխ-Առաջնորդ տէր Ստեփաննոս Ծ. վարդապետին, որ բազում մեծարանօք ընդունել է զյիշեալ բարձրաստիճան այցելուս, որոց հետ մի ժամու չափ տեսակցելու պատիւն ունեցեր է :

ՔԱՆԱՅԱՆ ԽՈՐԻՔ

Զմիւռնիա, 1 Ապրիլ :

Օսմանեան շոգեշարժ գործիւն Մանուրանուն, որ ի նաւահանգիստ մեր կըլ տնուի, Բարձրագոյն Դրան որոշմամբն մեր վսեմ վարիին հրամանաց ներքեւ գրաւեցաւ, առ ի գործ ածել զայն հարկը պահանջած ժամանակը : Յիշեալ շոգեհան 5 հատ փութեր թնգանօթ կրէ :

Մեծարգոյ տօքթօր Զայեան, որ Փարիզի քժչկական համալսարանէն ելած հայկազուն վարպետ բժիշկ է, ըստ առաջարկութեան մեր վսեմ վարիին և որոշմամբ քաղաքապետական խորհրդոյն Զմիւռնոյ՝ քաղաքապետութեան (պէշե-տիէ) բժիշկ կարգեցաւ, և միանգամայն յանձնեցաւ նմա հսկողութիւնն սպանդանոցի քաղաքիս, այսինքն մարթուելու ոչխարքն և կովքն քննել, որպէսզի հիւանդ և անտաքեալ կենդանիքն չ'մթնանան և չ'վաճառուին ի վնաս հասարակաց առողջութեան :

Բայ ի պատերազմական նաւուց ոմանց՝ կըղանուի այժմ ի նաւահանգիստ մեր գաղղիական նաւատորմին մէկ բաժնիք՝ ընդ հրամանատարութեամբ Լըժէսն ծովապետին և որ բազկայեալ է ի չորից շոգեհանուց :

Քաղաքիս նորընտիր դատաւորն (Հաքիմ) Հոյաար էֆէնտին, որ միանգամայն նախագահ է Տիվանը թէ միջոց ժողովոյն, երէկ առաւօտուն հասաւ ի Կ. Պօլսոյ :

Դարապուրտի զաւառին նորընտիր վալի վսեմ Սապրի փաշան, որ յաւուրց հետէ ի քաղաք մեր կըլ տնուէր, անցեալ կիրակի օրն մեկնեցաւ ի պաշտօնատեղին իւր երթալու Մալթայի ճանապարհաւ :

Յանցելում շարաթու գողերը Պուռնովայի Հայոց եկեղեցին և Քօքլուճայի Յունաց եկեղեցին մանելով, վերցուցին ինչ որ գտան և ինչ որ կըցան : Դժբաղդաբար այս սրբապիղծ շարագործքն տախալին ձեռք չ'անցան :

Բարեբաղդաբար ստիկանութիւնն յաջողեցաւ այս օրերս ձեռք ձգել ուրիշ 5 գողեր . յորոց երկուքն Բանայօթի և Բիթաքօ անուն, օսմանեան հպատակ են . իսկ մնացեալ երեքն Հեյլէնայի են և ի քաղաքս կը բնակին : Այս գողերն տեղական իշխանութեան բանտը տար :

ուեցան և նոյա հարցաքննութիւնքն կը լինին :
— Հինգ շարժի գիշեր գողերն Ռուսիոյ հիւպատոսարանը մտեր են . բայց պահապան գաղաղն իմանալով վախճեր են կաթսայ մը վերցնելով :

— Զորեքշարժի երեկոյն մինչդեռ վիճակիս Յունաց Մետրապօլիթը Շիշեճինեէն կանցնէր, թուրք բեռնակիր մի հայհոյական խօսքով անարգեր է զնորին Գերապատութիւնն : Ռուսիկանութիւնն իմանալով զայս, ազգու կերպիւ կը լինաւ զյիշեալ բեռնակիրն . որ տարակոյս չ'ունիմք, կըսէ «Նէա Սմիրնա» յոյն օրագիրն, թէ պիտի պատժուի օրինակ լինելու կերպիւ :

— Այսքնի մէջ յերկուց շաբաթուց հետէ երբեմն թեթեւ երբեմն սաստիկ երկրաշարժ անպակաս է և մեծ երկիւղ կը պատճառէ բնակացի բարեբաղդաբար այնպիսի վնաս մի է պատճառած՝ որ նշանակութեան արժանի լինի :

— Ըստ հեռագրական լրոց՝ Ռուսիան ընդունել է զբարեկամական միջնորդութիւնն Գերմանիոյ, և նոր ջանք կը լինին վասն դուստրման տէրութեանց ժողովոյն ի Պէրլին :

— Հայրենիք լրագրոյն Մարտի 28 թիւոյն մէջ զհետեւեալ տողն ընթեռնուեց :

«Ս Պատրիարք Հայր անցեալ շաբթու ազգութեան մի գրեց առ Բ. Դուռն» որ Պուստայի, Նիկոմիդիոյ, Սեբաստիոյ, Ամասիոյ, Մարաշի, Նի և այլ Հայաբնակ գաւառաց մէջ 25 բնակչութեան հաստատութեան գէմ բողոք բառնալով՝ կայսերական կառավարութեան լուրջ ուշադրութիւնը կը հրաւիրէ :

— Արժան համարիմք ծանուցանել բարեւեր հաստատութեան թէ Տփլիսի «Մշակ» անուն շաբաթական թերթին՝ ի ներկայ տարւոյս սկսեալ հրատարակի՝ միշտ խմբագրութեամբ յարգոյ Գրիգոր Արքուանի գրագէտին, ամեն օր ի բաց առեալ զտօն և տօնից հետեւեալ օրերն : Տարեկան բաժանորդութեան գինն 10 ռուբլի է և կէս տարեկանն 6 ռուբլի :

Յիշեալ օրագրոյն աշխարհիկ լրագրին մի փոքրիկ օրինակն մեր ընթերցողաց հաղորդելու համար՝ յառաջ կը բերեմք զհետեւեալ տողն «Մշակին» 13 թիւէն քաղելով :

«Մշակին» մէջ տպւած երկկիւղ հեռագիրը պարզ ցոյց է տալիս որ Անգլիան վերջապէս սկսած է մտածել Հայաստանի և Հայերի վրայ Արդեօք անկեղծ են Անգլիայի հայերի մասին հոգսերը : — Ընդհանր . բայց յոյս ունենանք որ անկեղծ են : Եւ այլն :

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ

Բամպակին քիչ մը կուղուի և 2300 հակ փաճառեցաւ ի թ օրուան մէջ : Մեքենայով մարտածին գինն 315—340 է առ կենդինարն ըստ տեսակին . իսկ Առանայի բամպակին արժէքն 312 դուրու է :

Աֆիսն ևս կուղուի և գինն բարձրանալու վերայ է : Այս շաբթու գրեթէ 40 կողով վաճառեցաւ 135 1/2 դուրուչի առ չէքին :

Փաղամուտն ի հանդարտութեան դտանի : Ի շաբաթուս 1800 կենդինար Անգլիոյ տեսակին և նախըրել կոչուած տեսակին վաճառեցաւ 103 և 120 դուրուչի առ կենդինարն :

Ճէհրէն ևս 40 քուրձ վաճառեցաւ օխան 7 1/4 դուրուչով :

ԾԱՆՈԹՅՈՒՄ

ՆՈՐ ՏՊԱՐԱՆ Ի ԶՄԻՆՈՒՆԻԱ

Նորահաստատ տպարանս՝ իրեն զիմոյ յաճախորդները գոհ ընելու և ազգային դրամականութիւնը ի շատ նպատաստանոց լինելու համար՝ պատրաստ է խիստ աման գիներով և մաքուր տպագրութիւնով ամեն տեսակ գիրք, պարբերական թերթեր և յայտարարութիւններ, հարսանիքի և յուղարկաւորութեան ծառուցադրանքի և ևս տպելու : Աւելի ընդարձակ տեղեկութիւններ ստանալ ուղղող կընայ գիմել ի Սեւէլէ Խան, վերի յարկ թիւ 17, ՄԱՐԵՐԱՆ ՏՊԱՐԱՆԸ :

Խմբագիր—տէր լրագրոյս,
Գ. Լ. Կ. Պ. Պալլաշալէան :

Ի ՏՊԱՐԱՆԻ ԱՐՇԱՆՈՅՍ ԱՐԱՐԱՏԵԱՆ